ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **5-6**-րդ դասարաններ

- **Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:

Ա. երկուսն էլ մի սանրի կտավ են ***Բ.*** երկու տիրոջ ծառա
Գ. երկու ոտքը չորս անել ***Դ.*** երկու ոտքը մի մաշիկ դնել
Ե. երկու ոտքով ցեխն ընկնել

2. Ո՞ր բառազույգը «երկերեսանի» չէ:

Ա. սյուն և շար ***Բ.*** զարդ և նկար ***Գ.*** քաղաք և մայր
Դ. նախշ և քանդակ ***Ե.*** դաշտ և վայր

3. Հինգտառանի համեղ միրգ եմ: Եթե երկու տառս հանես, կդառնամ կիրճ: Ի՞նչ եմ ես:

Ա. սալոր ***Բ.*** խաղող ***Գ.*** ծիրան ***Դ.*** խնձոր ***Ե.*** կեռաս

4. *Լու, մժեղ, մեղու, ծղրիդ, լուսատտիկ, զատիկ, մրջյուն, թիթեռ* միջատները հավաքվեցին, բանակ կազմեցին և իրենց համար կարգախոս ընտրեցին: Ո՞րն էր այդ կարգախոսը: Պատասխանը թաքնված է միջատների անվանումների շարքում:

Ա. «Ազնիվ ու բարի» ***Բ.*** «Ուժեղ ու արի» ***Գ.*** «Զորեղ ու տոկուն»
Դ. «Միամիտ ու համեստ» ***Ե.*** «Ուժեղ ու հզոր»

5. *Գետաքար, գետաքի, գետնանուշ, գետեզր, գետամերձ* բառերից որի՞ն ջուրը հարազատ չէ:

Ա. գետաքար ***Բ.*** գետաձի ***Գ.*** գետնանուշ ***Դ.*** գետաջուր ***Ե.*** գետաձուկ

6. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

սագ, կարագ, պահարան, աշխարհամարտ,

Ա. նախաճաշարան ***Բ.*** դասամատյան ***Գ.*** սահմանապահ
Դ. դասագիրք ***Ե.*** շախմատասեր

7. ՄՈՒՐ(2), ՍԱԳ(1), ԴՈՒՐ(2) բառաշարքի օգնությամբ Մարինեն բառ է մտապահել: Փակագծերում եղած յուրաքանչյուր թիվ ցույց է տալիս, թե Մարինեի մտապահած բառի և բառաշարքի տվյալ բառի մեջ քանի ընդհանուր տառ կա, ընդ որում՝ նույն դիրքերում: Մարինեի մտապահած բառն է՝

Ա. դաս ***Բ.*** սար ***Գ.*** սուր ***Դ.*** մուգ ***Ե.*** մասուր

8. Երեխաները դասարանում բառքամոցի էին խաղում: Ո՞ր բառից նրանք քամեցին ***հասակ, սարյակ, կայարան, արկած, կարաս, կածան, նկար*** բառերը:

Ա. սահնակ ***Բ.*** հակասություն ***Գ.*** հասարակություն
Դ. հասարակածային ***Ե.*** հանկարծահաս

9. Ո՞ր բառն իրեն զույգ կընտրի և «խունջիկ-մունջիկ» կստեղծի նոր բառ՝ իր առաջին տառին ձեռք չտալով:

Ա. պարապ ***Բ.*** մանր ***Գ.*** սուս ***Դ.*** փոքր ***Ե.*** հաց

10. ***Ակռա, ամուլ, կերոն, քաղաք, թաս, թույն, թակ*** բառերը գլուխկոնծի տալով փոխվեցին՝ բացի մեկից: Ո՞ր բառն էր դա:

Ա. կերոն ***Բ.*** ակռա ***Գ.*** թույն ***Դ.*** քաղաք ***Ե.*** ամուլ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Պատասխանի տարբերակներում բերված բառերից մեկը մեղվիկի թաքցրած բառի «հակառակորդն» է: Ո՞ր բառն է դա:

միանալ - իմանալ
կատաղել - տեղակալ
հաստանալ -

Ա. բարակել ***Բ.*** հարստանալ ***Գ.*** զայրանալ ***Դ.*** լայնանալ ***Ե.*** իմաստնանալ

12. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարելուկով:



Ա. Տասը չափել, մեկ կտրել ***Բ.*** Մեկը երկու չանել
Գ. Մեկը տասը շինել ***Դ.*** Տասը կտոր լինել
Ե. Երեսը գոմշի կաշի շինել

13. *Սեեր, տոք, իթք, քիոն, տյա* խառնագրերը ճիշտ մեկնելով՝ կգտնես խառնագրի օրինաչափությունը և ավելորդ բառը: Ո՞րն է ավելորդ:

Ա. սեեր ***Բ.*** տոք ***Գ.*** իթք ***Դ.*** քիոն ***Ե.*** տյա

14. Ամբողջացրո՛ւ հայկական ժողովրդական առածը:
Գործը վաղվան մնաց, _____ :

Ա. ուրեմն դա է ճիշտը ***Բ.*** թող մի օր էլ մնա ***Գ.*** իմացիր՝ կորավ գնաց
Դ. ավելի հեշտ կարվի ***Ե.*** լույսը ուշ կբացվի

15. Առաջին բաղաձայնը մոտեցավ Դ-ի դրկիցին և նրա հետ նստեց «90»-ի կողքին: Ի՞նչ ստացանք:

Ա. բեղ ***Բ.*** գյուղ ***Գ.*** եղան ***Դ.*** բեռ ***Ե.*** բարձ

16. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

ԵՐԿՈՒ
\+
ԵՐԿՈՒ
ՉՈՐՍ

Ա.	***Բ.***	***Գ.***	***Դ.***	***Ե.***
1824	2432	1952	3052	4032
+	+	+	+	+
1824	2432	1952	3052	4032
3648	4864	3904	6104	8064

Կեղծիքներից զգուշացեք միայն հանձնաժողովից

17. Արան մի անգամ խանութից հավասար քանակությամբ գնեց *ուրագ, եղան, գերանդի, բահ*: Յուրաքանչյուրից քանի՞ հատ գնեց: Պատասխանը հնարամտորեն թաքնված է ընդգծված բառաշարքում:

Ա. 4 *Բ.* 5 *Գ.* 9 *Դ.* 10 *Ե.* 20

18. ՍԴԾՈՒԷՔԶՄՇՅԾՈ տառաշարով ծածկագրված է հետևյալ նախադասությունը:

Ա. Սանդ ծեծողին քեզ ծառա մի՛ համարիր:
Բ. Սեդա՛, ծառա է քեզ ամեն շահի ծառա:
Գ. Սա ծառ է, պտղատու ծառ:
Դ. Ես դաս եմ տալիս քեզ, որ մարդ դառնաս:
Ե. Սեդան ու քեռակին Մանեն ծառայում են:

19. Ո՞ր բառն է գաղտնագրված:

5(Գ) 10(Բ) 6(Ա) 20(Գ) 1(Ա) 12(Բ) 10(Գ)

Ա. հավասար *Բ.* գավազան *Գ.* նավավար
Դ. նավամաս *Ե.* նորարար

20. Տարբերակներից չորսի երկրորդ նախադասության մեջ, բառի մկրատումից հետո, հայտնվել են առաջին նախադասության մի բառի մասերը: Ո՞ր տարբերակում մկրատը չի օգտագործվել:

Ա. Սկյուռը կաղին է սիրում: Կաղնուտը չխոնարհվեց փոթորկի առաջ:
Բ. Այսօր դարձյալ կարկուտ տեղաց: Հնդկահավերի առաջ կուտ կար թափված:
Գ. Գորգագործները կարպետ էին գործում: Արտադրամասում նոր պետ կար:
Դ. Փայտահատը սուր կացին ուներ: Լեռներում ցին կա, որ որսի է սպասում:
Ե. Աշակերտներին կարկին էր պետք շրջան գծելու համար: Ընկուզենու տակ մի կին կար կանգնած:

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ են «թաքնված» 1-ից 5-ում բերվածները՝

1. քիմքի զգացողությունը, 2. *կարմիր* բառի հոմանիշը,
3. *լեռ* բառի հոմանիշը, 4. չափման միավորը,
5. *տարի* բառի իմաստն արտահայտող բառը:

Ա. սարավանդ *Բ.* համակրելի *Գ.* սարալանջ
Դ. համարակալում *Ե.* համալսարան

22. Ն, ՈՒ, Ձ, Ք, Տ տառերը, ավելանալով *ճրագ, գողություն, առանց, ստել, ավար* բառերի աջից կամ ձախից, կազմում են՝

Ա. 8 բառ *Բ.* 7 բառ *Գ.* 6 բառ *Դ.* 5 բառ *Ե.* 4 բառ

23. **ՉԷ, ՄԵԿԸ, ՄԿԱՆ** բառաշարքի բոլոր բառերով և պատասխանի տարբերակներում տրված բառերից որո՞վ են կազմվում իմաստով իրարից տարբեր ամենաքիչը երկու նախադասություն: Բառերի տեղերը կարելի է փոխել, վերջավորությունները՝ ոչ:

Ա. հարմար *Բ.* կամար *Գ.* խմիչք *Դ.* բավարար *Ե.* համար

24. Կաշին՝ կարմիր,
Միսը՝ սպիտակ,
Ոսկորը՝ սև: *(ժողովրդական հանելուկ)*

Ա. մասուր *Բ.* փշատ *Գ.* խեցգետին *Դ.* կարմիր կով *Ե.* գնդակ

25. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս տողերով և սյուներով կկարդանք բառեր:

Ա. ասպ, պաս, պար *Բ.* առու, դուռ, ռուս *Գ.* գամ, խաչ, մեխ
Դ. աչք, պոչ, սպա *Ե.* ազի, ծագ, ծառ

26. *–Ծուղրուղո՛ւ, նարնջի՛, աղջիկ ունեմ՝ տանը չի, գնացել է բանջարի…*
Ժողովրդական խաղիկում ո՞ւմ է ուղղված աքաղաղի կանչը:

Ա. արեգակին *Բ.* հավին *Գ.* գյուղացիներին
Դ. այգեպանին *Ե.* նարնջի ծառին

27. Պատասխանի ո՞ր տարբերակում են հայկական առածների սկիզբն ու ավարտը միմյանց համապատասխանում:

1. Գայլի անունն է դուրս եկել, ա. բնավորությունը չի փոխի:
2. Մուկը ծակը չի մտնում, բ. ձին ուտի:
3. Օձն իր շապիկը կփոխի, գ. բայց հեռուն է տեսնում:
4. Ուղտը մոտիկ է արածում, դ. աղվեսը աշխարհը քանդեց:
5. Եզն աշխատի, ե. ցախավելն էլ պոչից կապեցին:

Ա. 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ *Բ.* 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե, 5-դ *Գ.* 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-դ
Դ. 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ *Ե.* 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ

28. ***Շ, ժ, ջ, թ, դ, ք, զ*** տառերը հերթ էին կանգնել **ռ*կուզ, պատ*զամբ, զվար*, մր*յուն, հա*թանակ, աշխույ*, հավա*ել, բա*կաթոռ, ար*ուն** շարքում՝ աստղանիշերի փոխարեն իրենց տեղերը զբաղեցնելու համար: Շարքը լրացնելուց հետո պարզվեց, որ որոշ տառեր եկել էին երկվորյակ եղբայրների հետ: Ո՞ր տառերն էին դրանք:

Ա. *ժ*-ն և *թ*-ն *Բ.* *դ*-ն և *ժ*-ն *Գ.* *շ*-ն և *զ*-ն
Դ. *դ*-ն և *թ*-ն *Ե.* բոլորը

29. *«Պայծառ աշուն էր: Պարտեզի տանձի ծառի տակ նստած էին Վարազդատն ու Թաթուլը: Նրանք հավատում էին՝ ջրի ակունքը չի ցամաքի»*: Ընդգծված հատվածում, տառերը չտեղաշարժելով, ամենաշատը քանի՞ կենդանու և թռչունի հանդիպեցիր:

Ա. 10 *Բ.* 9 *Գ.* 8 *Դ.* 7 *Ե.* 6

30. *- Արի բարձրանանք գագաթ:*
- Դա երեխայական զբաղմունք է:
Պատասխանի տարբերակներից որո՞ւմ է երկխոսության շարունակությունը «չարաճճի» օրինաչափությամբ թաքնված:

Ա. Ընկերներով նրանք հաճախ բարձրանում են:
Բ. Նրանք որոշեցին փորձել:
Գ. - Լավ, չես ուզում, չենք բարձրանա:
Դ. - Հեշտ է բարձրանալը:
Ե. Ընկերները թեթևակի ժպտացին իրար:

Մեղուհասարակությունը հայտնում է